

**ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԻՆԴԵՔՍԱՅԻՆ ՄԵԹՈԴՈՎ
Ֆիդանյան Լ. Ա., Գևորգյան Ռ. Վ.**

Գյուղատնտեսության դերը կարևորվում է երկրի պարենային անվտանգության ապահովման տեսակետից, որտեղ նախատեսվում է պարենային ապահովման մակարդակի բարձրացում, սննդամթերքի անվտանգության և հիմնական պարենային մթերքների ինքնաբավության նվազագույն մակարդակի ապահովում: Հաշվի առնելով պարենային անվտանգության հարցի կարևորությունը հողվածում իրականացվել է ՀՀ պարենային անվտանգության գործոնային վերլուծությունն ինդեքսային մեթոդով:

Բանալի բառեր. պարենային անվտանգություն, ինքնաբավության աստիճան, ինդեքսային մեթոդ, գործոնային վերլուծություն, միջին սպառում:


Երկրագնդի բնակչության աճի տեմպերը տարեցտարի ավելանում են, ինչը յուրաքանչյուր երկրի կանգնեցնում է սեփական հասարակության պահանջները ներքին տնտեսության հնարավորություններով ապահովելու հրամայականի առաջ: Պարենային անվտանգության ապահովման հարցը հրատապ է դարձել ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի մի շարք երկրներում, այն ունի գերակա նշանակություն:

Պարենային անվտանգության ապահովման շարժիչ ուժը հենց գյուղատնտեսությունն է, և այս ոլորտը պետք է դառնա կարևորագույն բարեփոխումների իրականացման թիրախը: Գյուղատնտեսությունը նաև Հայաստանի տնտեսության առանցքային ճյուղերից է և հանդիսանում է հասարակության կեցության հիմքը, որի զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական

բնակավայրերի կենսամակարդակն ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունն ու անվտանգությունը:

2020թ.-ի տվյալներով ՀՀ գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության համախառն ավելացված արժեքը կազմել է ՀՆԱ-ի 11.2%-ը (693.2 մլրդ. ՀՀ դրամ) [4], որի բաժնեմասը 2015թ.-ի համեմատ նվազել է 6.0 տոկոսային կետով:

Գծապատկեր 1-ից երևում է, որ ամբողջ աշխարհում 2000-2018թթ. գյուղատնտեսության ավելացված արժեքը միջին հաշվով կազմել է համաաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 4%-ը: Ամենաբարձր ցուցանիշները դիտվել են աֆրիկյան երկրներում, որոնք ունեն աճի միտում՝ 2000-2018թթ. կազմելով ՀՆԱ-ի 14.1-16%-ը: Համաաշխարհային միջին մակարդակից բարձր են նաև ասիական երկրները, սակայն այստեղ նկատվում է դիտարկվող ցուցանիշի նվազման միտում: Այս երկրներում գյուղատնտեսության ավելացված արժեքի մասնաբաժինը 2000-2018թթ. նվազել է 4 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ-ի 7%-ը: Եվրոպական և ամերիկյան երկրներում այս ցուցանիշը բավականին ցածր է՝ մոտ 2%:



Գծապատկեր 1. Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ավելացված արժեքի մասնաբաժինը ՀՆԱ-ի մեջ (%)՝ ըստ մայրցամաքների, 2000-2018թթ. [5]

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, որը բուսաբուծության և անասնաբուծության արտադրանքի ծավալն է արժեքային արտահայտությամբ, 2020թ. ընթացիկ գներով կազմել է 819.3 մլրդ. դրամ, որի 46.9 %-ը (383.9 մլրդ. դրամ) ձևավորվել է բուսաբուծության, իսկ 53.1%-ը (435.4 մլրդ. դրամ)՝ անասնաբուծական արտադրանքից [6]:

Ներկայումս ՀՀ բնակչության ավելի քան 36%-ը (1067,7 հազ. մարդ) [4] բնակվում է գյուղական բնակավայրերում: Վերջին տարիներին այս ցուցանիշը նվազման միտում ունի, մասնավորապես՝ 2015-20թթ. գյուղական բնակչության թիվը նվազել է 2.73%-ով կամ 30 հազարով: Ինչ վերաբերում է գյուղատնտեսության ոլորտում ՀՀ բնակչության զբաղվածությանը, ապա այն ևս ունի նվազման միտում: Եթե 2015թ. գյուղատնտեսությանը բաժին էր ընկնում ՀՀ զբաղվածների 35,3%-ը, ապա 2019թ.՝ ընդամենը 21,9%-ը [3]:

Համեմատության համար նշենք, որ այս ցուցանիշի համաշխարհային մակարդակը 2019թ. կազմել է ընդամենը զբաղվածության 28%-ը՝ 2000թ.-ի 40%-ի համեմատ [5]: Գյուղատնտեսական զբաղվածությունը նվազում է գրեթե բոլոր երկրներում, ինչը գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման և ավտոմատացման հետևանքն է:

Գյուղատնտեսության ոլորտի զարգացմամբ է պայմանավորված ինչպես գյուղական համայնքների, այնպես էլ ողջ հանրապետության սննդի արտադրության այնպիսի ենթաճյուղերի զարգացումը, որոնք հիմնվում են տեղական գյուղատնտեսական արտադրանքի վրա և ունեն արտահանման մեծ ներուժ: Գյուղմթերքի առևտրայնացման բարելավումը և արտահանման ծավալների մեծացումը Հայաստանի կառավարության օրակարգի գերակա առաջնահերթություններն են: Ներկայումս գյուղատնտեսության ոլորտի արտահանման ծավալները բավականին ցածր են: Այսպես, 2020թ. արտահանման ընդհանուր ծավալի մեջ ագրոպարենային ոլորտի մասնաբաժինը կազմել է ընդամենը 30,4% (774.3 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ վերջին տարիներին գյուղատնտեսական արտադրանքի արտահանման ծավալները, և վերջինիս մասնաբաժինն արտահանման ընդհանուր ծավալներում որոշակիորեն աճել են:

Հարկ է նաև նշել, որ ՀՀ-ում ագրոպարենային արտադրանքի ներմուծման ծավալներն ավելի մեծ են: Մասնավորապես 2020թ. ներմուծման ընդհանուր ծավալում ագրոպարենային արտադրանքի մասնաբաժինը կազմել է 18,3% (834.2 մլն ԱՄՆ դոլար) [4]: Ռազմավարական նշանակություն ունեցող գյուղատնտեսական որոշ արտադրատեսակների գծով այս իրավիճակը կարող է բացասաբար ազդել երկրի պարենային անվտանգության վրա, քանի որ այդ արտադրատեսակների գծով ինքնաբավության մակարդակը զգալիորեն ցածր է: Այդ արտադրատեսակների թվին են պատկանում

b-ն՝ վարելահողերի տեսակարար կշիռը ընդհանուր գյուղատնտեսական հողերում՝ արտացոլելով գյուղատնտեսական արտադրության կառուցվածքային պարամետրը,

c-ն անասնաբուծության ինտենսիվության (անասունների խտության) ցուցանիշն է

d-ն մսատվության ցուցանիշն է, որը բնութագրում է անասնաբուծության ինտենսիվությունը,

e-ն արտացոլում է գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկը, այդ թվում՝ գյուղատնտեսությունում մսի և մսատվության ապրանքայնության գործակիցը:

Գործոնային վերլուծության ժամանակ յուրաքանչյուր գործոնի ազդեցության չափը [2] (հաշվի առնելով յուրաքանչյուր գործոնի քանակական և որակական հատկությունը) բացարձակ մեծություններով որոշվել է ստորև ներկայացված բանաձևերի օգնությամբ, որոնց հաշվարկային տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

$$\begin{aligned} \pm \Delta_{y(a)} &= (a_1 - a_0) b_0 c_0 d_0 e_0 \\ \pm \Delta_{y(b)} &= a_1 (b_1 - b_0) c_0 d_0 e_0 \\ \pm \Delta_{y(c)} &= a_1 b_1 (c_1 - c_0) d_0 e_0 \\ \pm \Delta_{y(d)} &= a_1 b_1 c_1 (d_1 - d_0) e_0 \\ \pm \Delta_{y(e)} &= a_1 b_1 c_1 d_1 (e_1 - e_0): \end{aligned}$$

Աղյուսակ 1:

Խոզի մսի միջին շնչային տարեկան սպառման մակարդակի վրա գործոնների ազդեցության բացարձակ չափերը 2015-2019 թթ.

Տարիներ	Խոզի մսի միջին շնչային տարեկան սպառման բացարձակ փոփոխությունը					
	Ընդամենը $\pm \Delta_y$	այդ թվում՝ ըստ գործոնների				
		$\pm \Delta_{y(a)}$	$\pm \Delta_{y(b)}$	$\pm \Delta_{y(c)}$	$\pm \Delta_{y(d)}$	$\pm \Delta_{y(e)}$
2015-2016	-0.72746	0.04020	-0.00577	1.05643	-0.76227	-1.05604
2016-2017	0.20804	0.03247	-0.00061	-0.20473	-0.51263	0.89354
2017-2018	0.67322	0.03654	-0.01181	0.63231	-0.79602	0.81221
2018-2019	-0.45026	0.02082	-0.01681	1.59759	-1.70437	-0.34749
Ընդամենը	-0.29645	0.13003	-0.03500	3.08160	-3.77530	0.30221

Այսպիսով, ուսումնասիրվող ժամանակաշրջանում (2015-2019թթ.) խոզի մսի միջին շնչային տարեկան մակարդակը, ըստ առանձին գործոնների, կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ.

a - բնակչության մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական հողերի ավելացումը պայմանավորել է խոզի մսի տարեկան շնչային սպառման ավելացում 0.13 կգ-ով,

b - գյուղատնտեսական հողերի մեջ վարելահողերի մասնաբաժնի կրճատումը բերել է խոզի մսի տարեկան շնչային սպառման 0.035կգ նվազման,

c - 100 հա հողատարածությանն ընկնող անասունների գլխաքանակի ավելացումը, այլ հավասար պայմաններում, ընդհանուր առմամբ հանգեցրել է խոզի մսի տարեկան շնչային սպառման ավելացմանը 3.08 կգ-ով,

d - նշված ժամանակաշրջանում մատուցվող ցուցանիշի կայուն նվազման միտման դրսևորումը բերել է խոզի մսի տարեկան շնչային սպառման 3,78 կգ նվազեցման,

e - չնայած նշված ժամանակահատվածում մսի արտադրության նկատմամբ անձնական սպառման բաժնի ոչ կայուն միտման դրսևորմանը, այդուհանդերձ, այն բերել է խոզի մսի տարեկան շնչային սպառման 0.302 կգ ավելացմանը:

Հետևաբար, 2015-ից մինչև 2019 թվականներն ընկած ժամանակահատվածում խոզի մսի տարեկան շնչային սպառման ընդհանուր բացարձակ հավելվածը կկազմի՝

$$0.130 + (-0.035) + 3.082 + (-3.775) + 0.302 = -0.296:$$

Գյուղատնտեսության և մասնավորապես անասնապահության ոլորտում էքստենսիվ աճի դրսևորումներից է այն իրողությունը, որ անասնապահական մթերքի արտադրության ծավալների աճն ուղղակի կորելացվում է գլխաքանակի փոփոխության հետ [1]: Պարենային անվտանգության ապահովման համատեքստում ագրոպարենային համակարգի հիմնական նպատակն է առկա բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործման, ագրարային բարեփոխումների խորացման, տնտեսավարման ձևերի կատարելագործման, աշխատանքի արտադրողականության բարձրացման և գյուղատնտեսության ոլորտում ենթակառուցվածքների գործունեության բարելավման արդյունքում ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ Հայաստանի բնակչության կայուն պարենապահովման համար, այդ թվում՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության պայմաններում:

СТАТИСТИЧЕСКИЙ АНАЛИЗ СФЕРЫ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РА ИНДЕКСНЫМ МЕТОДОМ

Фиданян Л. А., Геворгян Р. В.

Роль сельского хозяйства важна с точки зрения обеспечения продовольственной безопасности страны, где предусматривается повышение уровня продовольственного обеспечения, обеспечение минимального уровня безопасности пищевых продуктов и самодостаточности основных пищевых продуктов. Учитывая важность вопроса продовольственной безопасности, в статье был проведен факторный анализ продовольственной безопасности РА индексным методом.

Ключевые слова: продовольственная безопасность, степень самодостаточности, индексный метод, факторный анализ, среднее потребление.

STATISTICAL ANALYSIS OF THE RA AGRICULTURAL SECTOR BY THE INDEX METHOD

Fidanyan L. A., Gevorgyan R. V.

The role of agriculture is important from the point of view of ensuring the food security of the country, where it is planned to increase the level of food security, ensure a minimum level of food safety and self-sufficiency of basic food products. Taking into account the importance of the issue of food security, we made a factor analysis of the RA food security by the index method.

Keywords: food security, degree of self-sufficiency, index method, factor analysis, average consumption.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <http://lori.mtad.am/files/docs/16363.pdf>
2. Адамов В. Е. Факторный индексный анализ (Методология и проблемы). М., Статистика. 1977. 200 с.
3. <https://armstat.am/am/?nid=82&id=2348> (30.12.2020)
4. <https://armstat.am/am/?nid=202>

5. http://www.fao.org/policy-support/tools-and-publications/resources-details/ru/c/1318829/?fbclid=IwAR2j5_ks8hCcS4HHbeJthQMJk2c8LTlB6F5jeJkEfgR37etWCd0_E3vIy88
6. https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/ArmStatBank_6%20Agriculture,%20forestry%20and%20fishing/AF-3-2020.px/?rxid=9aca3b83-2ac4-45ce-b2dd-dd3886639d9d

Տեղեկություններ հեղինակների մասին

Ֆիդանյան Լ. Ա.- տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Էլ. փոստ՝ lianafidanyan2012@gmail.com

Ղևորգյան Ռ. Վ.- տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
Էլ. փոստ՝ ruzangevorgyan@mail.ru

Տրվել է խմբագրություն՝ 26.09.2021
Գրախոսվել է՝ 08.12.2021